

## ԲԱՆԱԿԱՐԱՎԱՆ

### ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄ

1. — Երկուորիք. — Հայոց Գիր և Գրչութիւն գրքի (Տպ. 1973) 99րդ էջին ստորագլ թիւ 14 ծանօթութեան մէջ գրուած է. «Արամազդը կասկածել է, թէ հայրը կարող է ունենալ երկրորդ որդի ... ուստի նա սպանում է իր երկվորյացին և գցում ծովզ»: Այս խօսքի երկրորդ մասին բնագիրն է, «... և կտրեաց զերկառիս նորա և ընկեց ի ծովզ»: Այսինքն՝ կտրեց անոր երկուորիքը (ամորձիքը) և ծովզ ձգեց:

2. — Թվական. — Նոյն գրքի 163րդ էջին վրայ կը տեսնուին չորս տողեր, առաջած երաւաղէմիթիւ 145 ձեռագրէն: Այստեղ գործածուած ճճնական բառին

մէջ ագաղանագրուած թվականն մը մատանանշուած է, «1516, որին գումարելով զուարթնոցը, որը հաւասար է 6իւ, ձեռք բերուած է 1522 թուականը: Սա աւելորդ յոդնութիւն է և սիսակ հաշիւ: Յիշտառակարանը կ'ըսէ. «Արդ գրեցաւ ... գիրքս այս ի թուականիս հայկազո՞ն տումարիս Ութ հարիւր և եթներորդի», որ հաւասար է 1358ի: Զեռագրիս մէջ կան նուե յետագոյն յիշտառակագրութիւններ ԲՊԱ և ԽՃՂ թուականներով, բայց ոչ 1522-ը:

3. — Ղասարնի. — Սերամատիոյ Պատմութեան (Տպ. 1974) վերջին էջերուն մէջ կը գտնուի «Արենաստների օտար անվանումների Բառարան» մը, ուր «Ղասարնի» բառը կը տեսնուի հարցանիշով մը. Ղասարնի, Գասարնի, կը նշանակէ կտրենիցնող: Անթէպի մէջ յայտնի էր աղբիւր մը «Ղասարնի» բունարը անունով, որուն եղերքը թափիչները փայտով կը ծնեէին իրենց կտաւները մինչև որ լու ճերմինային: Այդ արհեստը շատ էին է

### Ա. ՍՏԵՓԱՆՈՒՄԻՆ

Քեզի կու զամ, ով մեծ սուրբ, ընծայուելու կարողին,  
Դուն որ իեանիզ զնի բերիր մեր մելքիերուն համար բիւր,  
Քեզ կը բերեմ խունիկ, աղօրք, նոզիս նոյնալիս սիրառաւ,  
Պասկաղիր անունիդ, ով հաւատէի հանատակ:

Չրհասկցան ենզ մարդիկ այն օրերուն ապերախս,  
Չրհասկցան զործն այն մեծ, որուն համար դուն եկար.  
Այսօր նոյնիսկ կան մարդիկ, որոնք ենզի չեն հանչնար.  
Բայց կը ներես դուն անոնց անզիտութեան չարատանչ:

Դուն դարերով կը մնաս նոզիներուն մէջ պայծառ,  
Սասդ մը ինչպէս մշավառ, մինչեւ հասնի օրն այն մեծ,  
Ուր այս աշխարհն ու երկինք այլեւս զիրաւ հասկընան:

Դուն, ով մեծ սուրբ, ընդունէ իմ այս տաղ առաջին,  
Վկայազիր եռ փառքիդ եւ անունիդ պատեհի,  
Եկած սիրտէս իմ պարման, առհաւաչեան իմ վաղուան:

Գյորուր, 1955

ՆԱԶԱՐԵԼԻ Պ. ԶԱՓԱՏԱՐԵՍՆ